ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝
«ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆԵՐ. ԱՌԱՍՊԵԼ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) նախագահության նիստերի դահլիճում հունիսի 5-ին և 6-ին տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ «Հայկազունիներ. առասպել և պատմություն» թեմայով: Գիտաժողովին մասնակցում էին ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի (ԱԻ), պատմության ինստիտուտի (ՊԻ), հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ), լեզվի ինստիտուտի (ԼԻ), մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի (ՄԿԻ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), ՀՀ մշակույթի նախարարության «Պատմշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի» (ՊԺԳԿ), Գորիսի պետական համալսարանի (ԳՊՀ), Ֆրանսիայի Լիմոժի համալսարանի (ՖԼՀ), Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի (ԳՊՄԻ) հայ և օտարերկրյա գիտնականներ:

Գիտաժողովն անցկացվեց տեր և տիկին Էդվարդ և Վերժին Մսըրլյանների *մեկենասությամբ:*

ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանն *իր ողջույնի խոսքում կարևորեց նմանատիպ գիտաժողովների անցկացումը և զեկուցումների համակողմանի քննությունը:*

Գիտաժողովի բացման խոսքը վերապահված էր ԳԱԱ ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանին *և ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան* Էդ. Մինասյանին*:*

Լիագումար նիստում (նախագահող՝ Վլ. Բարխուդարյան*), զեկուցմամբ հանդես եկավ ԳԱԱ թղթակից անդամ* Բ. Հարությունյանը *(ԵՊՀ)՝ «Հայկի և Բելի պատմության, հայ ժողովրդի կազմավորման, լ>յ հնչյունափոխության և մի քանի այլ հարցերի շուրջ» թեմայով: Զեկուցողը հանգել էր այն եզրակացության, որ ւ>յ հնչյունափոխությամբ Հայկին սկզբում անվանել են Հաւ, այսինքն՝ նախնի, հետագայում Հաւ-ը վերածվել է հայ-ի և ստանալով -կ մասնիկը՝ դարձել Հայկ, այսինքն՝ մարդ, որը պատկանում է նախնիներին: Պատմական գիտությունների դոկտոր* Ա. Քոսյանի *(ԱԻ) «Վանից մինչև Եփրատ (հայոց վաղ պետականության ակունքներում)» զեկուցման մեջ առաջ քաշվեց Հայասայի և Ազզիի տեղադրման մասին նոր տեսակետ, համաձայն որի՝ Հայասան ու Ազզին պետք է գտնվեին Վանա լճի և Խարբերդի դաշտի միջև ընկած շրջանում՝ ներառյալ նաև Արածանիի հյուսիսային ափերը: Պատմական գիտությունների թեկնածու* Հ. Սիմոնյանը *(ՊԺԳԿ) հանդես եկավ «Հայկ և Բել՝ ասք, առասպել, թե իրապատում» զեկուցմամբ: Նա Արագածոտնի մարզի Ներքին Նավեր և Վերին Նավեր դամբարանադաշտերի համալիր հետազոտման արդյունքները փաստագրական կարևոր նյութ համարեց, որին հավելվեցին համակարգչային մոնիտորի վրա ցուցադրվող այն եզակի գտածոները (կավանոթներ, գավաթներ,*

զարդեր, դրոշմ-կնիքներ), որոնք հայտնաբերվել էին պեղումների ժամանակ: Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Համբարձումյանը *(ԼԻ) «Հնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգման խնդիրները» զեկուցման մեջ խոսեց հնդեվրոպական ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգման խնդիրների մասին, լայն ուշադրության արժանացրեց հնդեվրոպական արմատի տարբերակային վերականգման հարցին, անդրադարձավ մինչ այժմ որևէ ստուգաբանություն չունեցող, այլև ոչ բավարար չափով ստուգաբանված փաստերին (ինչպես՝ հետ(ք)//ոտ(ն), ապտակ, համբոյր): «Հայկյան խորհրդապաշտությամբ հայոց պատմության խորենացիական իմաստավորումը» խորագիրն էր կրում պատմական գիտությունների դոկտոր* Էդ. Դանիելյանի *(ՊԻ) զեկուցումը: Հիշատակելով պատմահոր Հայոց ամբողջական պատմությունը՝ նա Հայկական լեռնաշխարհի բնապատմական միջավայրի մշակութային, էթնոհոգևոր, հասարակական ու քաղաքական զարգացումները կապեց Խորենացու երկի հետ՝ միաժամանակ անդրադառնալով պատմագիտության բնագավառում վերաճած «գերքննադատությանը» պատմահոր երկի նկատմամբ:*

Այնուհետև գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին բաժանմունքի նիստերում, որոնք նախագահում էին Ա. Քոսյանը, Պ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Վ. Համբարձումյանը *և* Էդ. Դանիելյանը*:*

Պատմական գիտությունների դոկտոր Վ. Վարդանյանը *(ՊԻ) «Հայկազունք ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»« զեկուցման մեջ, հենվելով պատմահոր հիշատակումների վրա, քննության առավ այն հարցը, թե հայ նշանավոր նախարարական տոհմերից որոնք են եղել Հայկազունիներ: Վերջիններիս թվին էին դասվում Միսական, Ռշտունի, Բզնունի, Խոռխոռունի և նախարարական այլ տոհմեր: Պատմական գիտությունների թեկնածու* Ա. Մովսիսյանը *(ԵՊՀ) հանդես եկավ «Միտանիի թագավորությունը և հայկազուն նահապետների ու արքաների ցանկը» զեկուցմամբ: Նա զուգահեռներ անցկացրեց Խորենացու ներկայացրած Հայկազուն նահապետների ու արքաների 55 հոգուց բաղկացած ցանկի մի շարք ներկայացուցիչների և Միտաննիական պետության մի քանի գահակալների անունների միջև: Մասնավորապես, ըստ հեղինակի, Խորենացու հիշատակած Պարետը նույնական է Միտաննիական գահակալ Պարատարնային, իսկ Վաշտակը՝ Վասաշատտային: Ըստ պատմական գիտությունների թեկնածու* Հ. Հակոբյանի *(ԵՊՀ) «Տիգրան Մեծը և Հայկազունիները» զեկուցման՝ Մ. Խորենացու կառուցած Հայոց պատմության հնագույն շրջանի պարբերացումն արտահայտված է Հայկազունիների՝ զգալի չափով առասպելական ցուցակի վրա: Հեղինակն անդրադարձավ նաև Խորենացու և Մեբեռսի տարաբնույթ դիրքորոշումներին, օրինակ, առաջին Բագրատունիներին Հայկազունիներ կամ օտարազգի համարելու խնդրին: Զեկուցողը հանգեց այն եզրակացության, որ Տիգրան Մեծի գործի ու փառքի զգալի զուգահեռները ոչ միայն Վաղարշակ Մեծի, այլև Տիգրան Երվանդյանի կերպարների հետ Խորենացու երկում, հավաստում են նրա՝ միևնույն Հայկազունների շառավղից ծագելը: Պատմական գիտությունների թեկնածու* Ա. Հակոբյանը *(ԱԻ) «Հայկական լեռնաշխարհում բիացիների և խորենա-*

ցիական հայկյանների տարածման ուղիների համադրության փորձ» զեկուցման մեջ պատմահոր ընկալումներն ու բանավոր և գրավոր աղբյուրները համադրելով, նմանությունների հիման վրա հայերի հետագա ծագումնաբանական պատկերացումներում դիտարկեց «հայ ազգի» (էթնոսի) կազմավորման գործում բիացիների նշանակալից դերի հիշողությունների պահպանումն ու արժևորումը, սակայն ոչ մերօրյա չափանիշներով ճշգրիտ տարբերակմամբ:

Կենսաբանական գիտությունների դոկտոր Լ. Եպիսկոպոսյանը *(ՄԿԻ) ներկայացրեց «Հայերի ծագումնաբանությունը. ժամանակակից գենետիկական հայացք» հիմնախնդիրը և հանգեց այն կարծիքին, որ գենետիկական համակողմանի ուսումնասիրությունները հստակ մատնանշում են, որ հայկական պոպուլյացիաներում գերիշխում են նեոլիթյան ծագում ունեցող գենետիկական տոհմագծեր, որոնք, ամենայն հավանականությամբ, մուտք են գործել տարածաշրջան Միջերկրականի արևելյան առափնյա շրջաններից: Պատմական գիտությունների թեկնածու* Ս. Հմայկյանը *(ՀԱԻ) «Տոտեմ և ֆետիշ երևույթը և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը» զեկուցման մեջ նշեց, որ Հայկի և իր որդիների ու թոռների, այսինքն՝ հայերի ֆետիշացումը վերջնական տեսք ստացավ այն ժամանակ, երբ Մ. Խորենացին ավարտեց իր «Պատմութիւն հայոցը»՝ վերջինս համարելով որպես խոշորագույն և անընդհատ վերստեղծվող ֆետիշ: «Վանի թագավորության անկման խնդրի շուրջ» թեմայով զեկուցում կարդաց պատմական գիտությունների թեկնածու* Ե. Գրեկյանը *(ԱԻ): Հնագիտական և սկզբնաղբյուրների հիման վրա քննվեցին Վանի թագավորության անկմանն առնչվող խնդիրները՝ նշված իրողությունը դիտելով որպես Ուրարտական տերությանը համակած ճգնաժամի վկայություն: Պատմական գիտությունների դոկտոր* Օ. Խնկիկյանը *(ԳՊՀ) «Հայոց ցեղասերության հարցի շուրջ» զեկուցման մեջ հիշատակեց «Հայկի և Բելի պատերազմը» և «Պատմվածք ութ եղբայրների մասին» անվանումներով հայտնի հայ-վրացական ավանդությունները՝ քննելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:*

Պատմական գիտությունների թեկնածու Ռ. Ղազարյանը *(ԱԻ) հանդես եկավ «Տուրուբերանում Հայասայի տեղորոշման հարցի շուրջ» խորագրով զեկուցումով: Նա եզրակացրեց, որ պատմական Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհը, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է այն հիմնական տարածքը, որտեղ գտնվել է Հայասա-Ազզին: Պատմական գիտությունների թեկնածու* Վ. Խաչատրյանի *(ՊԻ) զեկուցման վերնագիրն էր՝ «Հայկ նահապետը որպես պատմական անձ»: Ըստ նրա՝ Բելը՝ Նեբրովթը, ասսուրական սեպագիր աղբյուրներում բազմիցս հիշատակված Թուքուլթի-Նինուրթա արքան է, իսկ Հայկը կարող էր լինել Պախուվա երկրի առաջնորդ Միտան: Բանասիրական գիտությունների դոկտոր* Ա. Մուշեղյանի *(ԳԻ) «Քսենոփոնի Արմենիոս թագավորը՝ Մովսես Խորենացու հայկազուն արքա (մ. թ. ա. VI դարի առաջին կես)» զեկուցման մեջ քննվեցին մ. թ. ա. V–IV դդ. հույն նշանավոր ժամանակակիցներ՝ փիլիսոփա Պլատոնի (428/7–348/7) և զորավար-պատմագիր Քսենոփոնի երկերում պատկերված Արմենիոս անունով երկու գործիչ: Բերելով մի շարք փաստեր՝ հեղինակը եկավ այն հետևության,*

որ հայ ժողովրդի պատմության մ. թ. ա. VI դարի արքայացանկում Երվանդ Սակավակյացը պետք է հիշվի որպես թագաժառանգ՝ առանց գահակալման տարիների, իսկ Տիգրան Ա Երվանդյանից առաջ պետք է ավելացնել նոր թագավոր Արմենիոս-Հայկակ անունով (մ. թ. ա. 580–560 թթ): «Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ» խորագիրը կրող զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Աղաբեկյանը *(ԼՀ): Նա հայերենում հնարավոր համարեց ուրարտերենի ենթաշերտային, խիստ տեղայնացած, հիմնականում Վանա լճի ավազանում որոշ դրսևորում՝ միաժամանակ նկատելով հայերենի բարբառային յուրահատկությունների հետքեր ուրարտերեն տեքստերում:*

Ըստ բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Պետրոսյանի *(ՀԱԻ) «Արամանյակը և Արամայիսը առասպելաբանության համատեքստում» զեկուցման՝ համահունչ անուններով այս երկու հերոսները հիշեցնում են առասպելաբանական երկվորյակների կամ երկվորյակային տիպի կերպարների, որոնք կամ որոնցից մեկը նոր քաղաք է կառուցում և հիմք դնում նոր ավանդույթի, ինչպես Սանասարն ու Բաղդասարը, Երվանդն ու Երվազը, Հռեմոսը և Հռոմուլոսը: Խեթական հիմքերով ստուգաբանելով Արմավիր անվանումը՝ հեղինակը նշեց, որ Ար(ա)մայիսը կարող է համարվել հին լուսնաստծու կերպարը: Առասպելաբանության մեջ առկա փաստերն էլ, ըստ նրա, թույլ են տալիս կարծել, որ Արամանյակն էլ եղել է արևի մի աստվածություն: Պատմական գիտությունների դոկտոր* Ս. Պետրոսյանը *(ԳՊՄԻ) «Գեղամի, Միսակի և Վերդուրի-Էթիունի ցեղախմբի պաշտամունքի մասին» զեկուցման մեջ նշեց, որ Վերդուրին Սևանի ավազանը բնակեցրած էթիունյան ցեղախմբին տրված անվանում է եղել, որի հիմքում ընկած է հնդեվրոպական լեզուներում «ջուր, գետ» նշանակող *ued-արմատը՝ *Ueduri-ն բացատրելով որպես «մերձլճյա», «մերձծովյա», «ջրային», «ջրորդի»: Վեդուր//»ջրորդի» նախնու առասպելաբանական կերպարը հնդեվրոպական հեռավոր անցյալից, ավելի ուշ համադրվել էր Հայկազն Գեղամի Միսակ որդու կերպարի հետ և զրույցներում սերտաճել նրան: Այդպիսով՝ Հայկազն Միսակը համարվել էր ինչպես Գեղամի որդի, այնպես էլ անձնավորյալ մայր Սևանի ծնունդ՝ «ջրորդի»:* Ի. Կլոկ-Ֆոնտանին *(ՖԼՀ) հանդես եկավ «Խաթերը ըստ խեթական սկզբնաղբյուրների» թեմայով և քննարկեց Խեթական պետությունում խաթերենի դերի մասին որոշ հարցեր:*

Ասպիրանտ Ա. Հովսեփյանի *(ՖԼՀ) թեման էր՝ «Փոքր Ասիան և Հայաստանը. նոր հեռանկարներ»: Նա խոսեց իր առջև դրված խնդիրների ու նպատակների իրականացման մասին, որոնք կապված էին վերոնշյալ հարցի հետ: Պատմական գիտությունների թեկնածու* Գ.Վարդումյանը *(ՊԻ) «Հայկազուններն նավասարդյան տոները» զեկուցման մեջ հիշատակեց Մ. Խորենացու, Սեբեոսի, Ա. Շիրակացու, Վանական Վարդապետի երկերը, որոնցում Հայկ նահապետն ու իր սերունդները վկայված են որպես անհաղթելի դյուցազն հսկաներ: Այս ամենին նա զուգահեռեց նավասարդյան տոնակատարությունների անցկացումը հին Հայաստանում, որոնք ուղեկցվել են արքայական որսաշարով, փողերով, թմբուկներով, հետագայում նաև՝եկեղեցու զանգերով:Պատմական գիտությունների թեկնածու*

Ա. Բոբոխյանը *(ՀԱԻ) հանդես եկավ «Հարքը Բրոնզի և Երկաթի դարաշրջանում. Առասպել, Պատմություն, Հնագիտություն» զեկուցմամբ: Հեղինակը եկավ այն եզրակացության, որ առասպելական և պատմական տվյալները լիովին համընկնում են Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային գործընթացներում Հարքի ունեցած կենտրոնական նշանակության խնդրում, իսկ հնագիտական տվյալները ցույց են տալիս, որ բրոնզի և երկաթի դարաշրջանում Հարքի տարածքում տեսանելի են նույն զարգացումները, ինչ Հայկական լեռնաշխարհի (հատկապես դեպի հյուսիս ընկած) շրջաններում: Հեղինակն անդրադարձավ նաև Հարք անվան ծագման խնդրին՝ ներկայացնելով սեփական վարկածը: Ըստ* Կ. Թոխաթյանի *(ՊԻ) «Հայկյան օրացույցի ակունքներում» զեկուցման՝ Հայկական լեռնաշխարհը եղել է հոգևոր ու մշակութային ալիքների տարածման կենտրոն: Անդրադառնալով Հայկ-Օրիոն համաստեղությանը՝ նա նշեց, որ Հայկն աստվածացվում և իր տեղն է գտնում աստղազարդ երկնքում, քանզի հայոց դիցաբանական պատկերացումներում նետաձիգ Հայկը տիեզերքում մարմնավորել է երկնքի ամենապայծառ՝ Հայկ աստեղատունը, ինչը արտահայտվել է նաև ժայռապատկերներում: Պատմական գիտությունների թեկնածու Հ.* Խորիկյանը *(ԱԻ) «Աքեմենյան Պարսկաստանի XIII սատրապության վարչական բաժանումը Դարեհ II-ի ժամանակաշրջանում» զեկուցման մեջ քննեց Դարեհ II-ի ժամանակաշրջանին վերաբերող բաբելոնյան սեպագիր տեքստերից մեկը, ըստ որի, եփրատյան Նիպպուրի ափին Շամաշ-բարաքքուի ղեկավարությամբ գտնվել է «ուրաշտացիների և միլիդուացիների» ռազմական գաղութը:*

Գիտաժողովն անցավ հարցադրումների և բուռն քննարկումների միջավայրում: Նրա աշխատանքներն ամփոփեց Վլ. Բարխուդարյանը:

ԳԱՅԱՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ